

Գևորգ ՆԱԲԻՆՅԱՆ

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ասրյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր,
Երևանի հյուսիսային համալսարանի հայցորդ

ՊԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Իրավական ակտերի շարքում դատական ակտերը հատուկ տեղ են զբաղեցնում: Ասվածը պայմանավորված է երկու կարևորագույն հանգամանքներով: Նախ՝ ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրվում է դատական իշխանությունների ինքնուրույն դերը պետական իշխանության համակարգում, երկրորդ՝ տարեցտարի աճում է դատարանի և արդարադատության նշանակությունը հասարակության շրջանում: Սա փաստում է այն մասին, որ դատական ակտերը շարունակաբար ստանալու են առավել նշանակալի դերակատարում: Այս միտումը պայմանավորում է քաղաքացիաիրավական կարգավորման արդյունավետ կառուցակարգի ներդրման համատեքստում հիմնախնդրի դոկտրինալ մեկնաբանման անհրաժեշտությունը: Մինչդեռ, իրավաստեղծ գործունեության և իրավակիրառ պրակտիկայի համար հիմնարար մի խնդիր, այն է՝ դատական ակտերի իրավական բնութագիրը գրեթե մեկնաբանված չէ:

«Իրավական ակտ» հասկացությունը իրավագետների մեծ մասի կողմից ընկալվում է որպես իրավական փաստաթուղթ, այսինքն՝ իրավաչափ վարքագիծը և դրա արդյունքն ամրագրող փաստաթղթային կամարտահայտություն¹:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) 7-րդ հոդվածով դատական ակտին է վերագրվում դրա համապատասխանությունը իրավական ակտերին ներհատուկ պահանջներին, այն է՝ Սահմանադրության, սահմանադրական օրենքների, Հայաստանի Հանրապետության վավերաց-

րած միջազգային պայմանագրերի, այլ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս և լուծելիս:

Ըստ Ս. Կ. Չազայնովայի «դատարանի բոլոր որոշումները կարելի է մեկնաբանել «իրավական ակտեր» հասկացությամբ՝ հաշվի առնելով դրանց հետևյալ հայտանիշները՝ ա) իրավակիրառ բնույթը և համապատասխանությունը օրենսդրական բոլոր նորմերին, բ) ինքնուրույնությունը և այլ մարմինների կողմից ընդունված ակտերից կախվածության բացառումը, գ) քննվող գործի շրջանակում դրանց բովանդակության անհատականացվածությունը, դ) որոշումների առարկայական գնահատումը վերահսկողության և բեկանման կարգով, ե) որոշումների ընդունումն առանձին երկրների ողջ օրենսդրական դաշտի համատեքստում, զ) դատական ակտի տեքստը կազմելու առանձնահատուկ պահանջների առկայությունը»²:

Վերլուծելով ներկայացված մոտեցումը, գտնում ենք, որ հեղինակի տեսակետում առաջին երկու հայտանիշները հակասում են մեկը մյուսին: Այսպես, եթե խոսենք դատական ակտերի ինքնուրույնության և այլ մարմինների կողմից ընդունված ակտերից կախվածության բացառման մասին, ապա առաջին հայտանիշից պետք է բացառենք դատական ակտերի «համապատասխանությունը օրենսդրական բոլոր նորմերին» արտահայտությունը, քանի որ սա ինքնին արտահայտում է օրենսդրի՝ դատական ակտերի միջև փոխկապակցվածության պա-

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՈՍ 2018 7 - 8 (229-230)

ՊԱՏԱԿԱՆ
Իշխանություն



հանջը: Մինչդեռ, այս դրույթի բացառումը կարող է հանգեցնել ողջ իրավակիրառ և իրավակարգավորող համակարգի խաթարման: **Կարծում ենք՝ նպատակահարմար կլինի առաջին հայտանիշը լրացնել հետևյալով՝ «իրավակիրառ բնույթը և համապատասխանությունը օրենսդրական բոլոր նորմերին, որոնք չեն հակասում սահմանադրական դրույթներին, իրավունքի սկզբունքներին և նորմերին, միջազգային իրավունքի նորմերին և ստանդարտներին»:**

Դատական ակտերի իրավական (իրավաբանական) բնույթին ներհատուկ են հետևյալ հատկանիշները՝

- փաստաթղթային բնույթը. այն համարվում է արտաքնապես օբյեկտիվացված, փաստացի հիմնավորված իրավական փաստաթուղթ, որնարտացոլում է իրավունքի իրողությունը³,
- կամային բնույթը. դատական ակտը ամրագրում է իրավասու անձանց կամքը՝ օժտելով այն իրավական ուժով,
- իրավական համակարգի բովանդակային տարրերի՝ իրավական նորմերի և իրավակիրառ պրակտիկայի ամրագրումը դատական ակտում⁴:

Մ. Ա. Ռոժկովան դատական ակտը սահմանում է որպես դատարանի կողմից ընդունվող կատարողական ակտ-փաստաթուղթ, նյութական իրավունքի իրավական փաստ, որը հանգեցնում է որոշակի իրավական հետևանքների⁵:

Պ. Ա. Լուպինսկայան բոլոր դատական ակտերը մեկնաբանում է որպես դատավարական ձև ստացած իրավական ակտեր, որտեղ քննիչը, դատախազը, դատավորը կամ դատարանն օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակում պատասխանում են գործին առնչվող հարցերին և, կոնկրետ հանգամանքները հաշվի առնելով, սահմանում են իրենց «կամքը»՝ միտված լինելով դատավարական գործընթացի խնդիրների

կարգավորմանը⁶:

Դատական ակտերը տարբերակվում են պետական իշխանության այլ մարմինների ակտերից՝ հաշվի առնելով դատական իշխանության իրավակիրառ բնույթը: Այս համատեքստում մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են դատական ակտերին ներհատուկ հատկանիշներ: Մասնագիտական գրականության մեջ առանձնապես ուշադրություն է դարձվում այն դրույթներին, թե արդյո՞ք դատական ակտերը համարվում են անհատական իրավակիրառ ակտեր, և արդյո՞ք դրանք միայն իրավակիրառ ակտեր են, թե կրում են նաև դատական նախադեպի հատկանիշներ⁷: Այս կապակցությամբ իրավունքի տեսության մեջ ընդգծվում է, որ դատական ակտերը անհատական իրավակիրառ ակտեր են, այսինքն՝ ներհատուկ են կոնկրետ գործի և կոնկրետ անձանց⁸: Բայց քանի որ դատական ակտերում արտացոլվում է երկրի դատական իշխանության հեղինակությունը, ուստի Մ. Գ. Րեշենկինը և Ն. Վ. Պավլովը գտնում են, որ «դատական ակտը պետք է արտացոլի դատական իշխանության անկախությունը և ձևավորի հասարակական կարծիք»⁹:

Դատական ակտերը նաև իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր են, որոնք ծառայում են որպես քաղաքացիական իրավահարաբերությունների առաջացման, փոփոխման կամ դադարեցման հիմք: Այդ մասին դատավարական գրականության մեջ առաջին անգամ խոսել են Վ. Վ. Յարկովը, Մ. Ա. Գուրվիչը, Օ. Ա. Կրասավչիկովը, Գ. Լ. Օսոկինան, ովքեր դատական որոշումներն ընդունել են որպես ոչ միայն դատավարական, այլև նյութական իրավաբանական փաստեր¹⁰:

Պրոֆեսոր Ռ. Գ. Պետրոսյանը գտնում է, որ դատական ակտի իրավական բնույթը դրսևորվումն այն է, որ այն օրենքով սահմանված կարգով պետության անունից կայացված արդարադատության ակտ է, որը գործը, ըստ էության,

լուծելու միջոցով պաշտպանում է կողմերի իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը, ինչպես նաև պետության շահերը¹¹:

Հայ հեղինակներից Ս. Գ. Մեղրյանը, որպես առաջնային ընդգծում է դատական ակտի կարգավորիչ բնույթը: Ըստ նրա՝ դատական ակտի կարգավորիչ բնույթը դրսևորվում է նրանում, որ դրա միջոցով է դատարանը ներգործում իրավահարաբերության մասնակիցների վարքագծի վրա, վիճելի և ենթադրյալ հարաբերությունները դարձնում է իրականում գոյություն ունեցող և անվիճելի¹²:

Ա. Հ. Դավթյանը գտնում է, որ, ըստ էության, կապված լինելով օրինականության և հիմնավորվածության հետ՝ դատական ակտերն ունեն միանգամայն ինքնուրույն և կոնկրետ իրավական բնույթ: Նմանօրինակ պահանջների թվին նա դասում է գործն ըստ էության լուծող դատական ակտի որոշակիությունը (կատեգորիկ բնույթը), անպայմանականությունը և լրիվությունը (սպառիչ բնույթը): Քանի որ շահագրգռված անձը դատարան է դիմում իր կոնկրետ իրավունքի կամ օրինական շահի պաշտպանության պահանջով, ուստի դատարանի վճիռը ևս պետք է կոնկրետ լինի, իսկ նման հատկության մասին խոսք կարող է լինել միայն այն ժամանակ, երբ վճիռը որոշակի է, անպայմանական և սպառիչ¹³:

Ս. Կ. Չազայնովան արդարացիորեն ընդգծում է այն, որ իշխանության բաժանման տեսության համաձայն՝ դատական իշխանության կողմից իրավագործության արդյունավետ իրագործումն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի վերջինիս դատական ակտերին և ներհատուկ լինի այն իրավական բնութագիրը, որն ունեն պետական իշխանության այլ ճյուղերի ակտերը¹⁴:

Դատական իշխանությունը, դիտարկելով իշխանությունների բաժանման կառուցակարգի (մեխանիզմի) համատեքստում, Ռ. Չ. Լիվիչը պնդում է, որ «ընդունելով դատական իշխանությունը

որպես պետական իշխանության առանձին ճյուղ, գտնում ենք, որ դատարանի կողմից թույլատրելի է իրավական նորմերի ընդունումը: Դատական իրավական նորմերը քաղաքակիրթ հասարակության կառավարման արդյունավետ միջոցներ են»¹⁵:

Այսպիսով, մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավակիրառ պրակտիկայում դատական ակտերին տրվում է էական դերակատարում: Այս մասին են վկայում ինչպես դատական ակտերի հասկացության, իրավական բնույթի տարատեսակ մեկնաբանությունները տեսության մեջ, այնպես էլ դատական պրակտիկան: Մասնավորապես, դատական ակտերն ուսումնասիրվում են որպես դատական իշխանության իրացման ակտ¹⁶, իրավակիրառ ակտ¹⁷, գործն, ըստ էության, լուծող ակտ¹⁸, փաստաթուղթ, որը բովանդակում է վեճի կողմերի և քաղաքացիների վրա դրական-դատարակչական ներգործության տարրեր¹⁹, որպես դատավարական փաստաթուղթ²⁰:

Այժմ գործնական համատեքստում հիմնավորենք կատարված ուսումնասիրության արդյունք համարվող այն եզրահանգումը, որ դատական ակտերը բազմաբնույթ են: Այդ նպատակով մենք քննության ենք ենթարկել ԱՐԱԳ/0333/02/14 և ԵԿԳ/2266/02/16 քաղաքացիական գործերով վճիռները: Ուսումնասիրվող դատական ակտերից առաջինը՝ ԱՐԱԳ/0333/02/14 քաղաքացիական գործով վճիռը կայացվել է ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի, իսկ երկրորդը՝ ԵԿԳ/2266/02/16 քաղաքացիական գործով վճիռը՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից: Դատարաններն իրենց գործողություններում առաջնորդվել են անկախ դատարանին ներհատուկ սկզբունքներով:

Ուսումնասիրվող վճիռները կայացնելիս, դատարանները նախ հանդես են եկել Հայաստանի Հանրապետության



անունից, ղեկավարվել ոչ միայն դրանց հիմքում ընկած քաղաքացիական գործերով ներկայացված հայցապահանջների նկատմամբ կիրառելի իրավանորմերով, այլ կիրառել են վճռի բովանդակությամբ վերաբերող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն նորմերը, որոնց միջոցով դատարաններն ի գործ են դրել դատական ակտերի պետական կամ արտահայտման բնույթը:

Բնույթյան առնված վճիռների կազմման կարգն ամբողջությամբ համապատասխանում է մահմադրական փաստաթղթերին բնորոշ պահանջներին. պահպանված են դրանց բնորոշ կառուցվածքաձևաբանական նորմերը: Փաստաթղթի կազմման գործընթացում դատարաններն առաջնորդվել են տրամաբանական հաջորդականության և իրավաբանական փաստերի փոխկապակցվածության ապահովման դրույթներով:

Բնույթյան առնված վճիռները, կարծում ենք, կողմերի համար միանշանակ ընկալելի են եղել, ապահովվելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշը, որն էլ գուցարդվել է վերջինիս կատարողականության բնույթի դրսևորմանը:

Այնուամենայնիվ, պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ոչ բոլոր իրավական համակարգերում են դատական ակտերը համարվում իրավունքի աղբյուրներ՝ նախադեպեր: Որպես կանոն, դատական ակտերի նախադեպային բնույթը ներհատուկ է ընդհանուր (անգրասաքսոնական) իրավունքի երկրներին:

Դատական ակտերի կազմում մենք մտցնում ենք ոչ միայն ազգային դատարանների, այլև միջազգային դատական հաստատությունների կողմից ընդունված ակտերը: Ընդ որում՝ միջազգային դատական հաստատությունների կողմից «նախադեպայնությունը» կամ ուղղակիորեն նշվում է դատական ակտում (հակառակ դեպքում՝ բացառվում), կամ էլ ձևավորվում է անուղղակիորեն՝ պրակտիկայում:

Այսպես՝ ըստ ՄԱԿ-ի միջազգային դատարանի ստատուտի 59-րդ հոդվածի՝ Դատարանի որոշումները պարտադիր են միայն կոնկրետ գործի մասնակիցների համար²¹: Բացի այդ՝ դատարանի որոշումներում ընդգծվում են, որ վերջինս չի համարվում օրենսդիր մարմին և պարտավորվում է կիրառել արդեն իսկ գործող իրավունքն այնպես, ինչպես որ կա, այլ ոչ թե ստեղծել այն:

Միևնույն ժամանակ, որոշ միջազգային դատարանների դատական ակտերը, ի հակադրումն նախորդ օրինակի, համարվում են նախադեպային, այսինքն՝ անվերապահորեն ճանաչվում են այդպիսին: Որպես օրինակ կարող ենք նշել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի²² և Միջազգային քրեական դատարանի որոշումները:

Ինչ վերաբերում է Եվրոպական միության դատարանի որոշումներին, ապա ընդգծենք, որ ֆորմալ կողմից, մասնավորապես՝ Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրի²³ 249-րդ հոդվածով Դատարանի որոշումներն ուղղակիորեն եվրոպական իրավունքի աղբյուրների թվին չեն դասվում: Մեր կարծիքով՝ այսօրինակ դրույթի բացակայությունը ԵՄ հիմնադիր փաստաթղթերում լրջագույն բացթողում է իրավական կարգավորման համատեքստում: Խնդիրը այն է, որ ԵՄ դատարանի որոշումները կրում են առանձնահատուկ բնույթ, քանի որ Հռոմի պայմանագրով, որով ստեղծվեց Եվրոպական տնտեսական համագործակցությունը, ամրագրված է ԵՄ դատարանի կարևորագույն գործառույթը, այն է՝ «Դատարանը երաշխավորում է իրավունքի միասնականության պահպանումը Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման դեպքերում»²⁴:

Ընդգծենք նաև, որ Միության հիմնադրման փաստաթղթերից և ոչ մեկում չի հստակեցվում ԵՄ դատարանի որոշումների նշանակության հարցը ինչպես ԵՄ իրավակարգավորման համատեքստում, այնպես էլ անդամ-երկրների ազգային-

դատական պրակտիկայում:

Արդեն իսկ գործունեության սկզբնական փուլում ԵՄ դատարանն իր որոշումներում ամրագրեց որոշ իրավական դիրքորոշումներ, որոնք անգնահատելի դերակատարում ունեցան Միության իրավունքի զարգացման գործում: Խոսքն այնպիսի որոշումների մասին է, ինչպիսիք են Van Gend en Loos²⁵, Da Costa²⁶, որոնց միջոցով ԵՄ դատարանը սահմանեց ԵՄ իրավունքի դերը անդամ-երկրների ազգային իրավունքի հետ հարաբերակցությամբ: Բացի այդ, սահմանվեց որոշումների պարտադիր լինելու հանգամանքն ինչպես վեճի կողմերի, այնպես էլ ԵՄ իրավունքի բոլոր սուբյեկտների համար:

Մենք գտնում ենք, որ ԵՄ դատարանի որոշումներն անվերապահորեն կրում են նախադեպային բնույթ և այդ դատարանի գործունեության մեջ առանձնակի դերակատարում ունի նրա սեփական որոշումների կյանքի կոչման գործում միտոսողականությունը:

Ինչպես իրավացիորեն նշում է Դ. Ս. Տիխոնովեցկովոն, նախադեպի դոկտրինան միտված է ԵՄ իրավունքի նորմերի իրավակիրառ պրակտիկային անդամ-երկրների ազգային դատարանների ակտիվ մասնակցությունը խրախուսելուն: Նախադեպի դոկտրինայի համակարգը բովանդակում է «acte clair»²⁷ և «delegation sectorale des fonctions judiciaires»²⁸ հայեցակարգերը: «Acte clair»-ը հնարավորություն է տալիս լուծելու այն հարցը, թե որ դեպքում է հնարավոր նախադեպը դիտարկել որպես ԵՄ իրավունքի աղբյուր, որը ենթակա է անվերապահորեն կատարման և ունի բարձրագույն իրավական ուժ անդամ-երկրների համար: «Դատական գործառույթների բաշխումը ԵՄ դատարանի և անդամ-երկրների դատարանների միջև» հայեցակարգը սահմանում է, թե ինչպես է նախադեպը կիրառվում ԵՄ անդամ-երկրների կողմից որպես

նախադեպ և որն է այդ դեպքում ազգային դատարանների իրավակիրառ դերը²⁹:

Այսպիսով՝ ԵՄ դատարանի որոշումների առաջնայնությունը ԵՄ իրավունքի ձևավորման գործում անբննելի իրողություն է, միևնույն ժամանակ բացակայում են դրանց նախադեպային բնույթն ամրագրող նորմերը, որոնք դժվարացնում են դրանց իրացման գործընթացը: Կարծում ենք, որ պետք է իրավական հարթակում որպես ԵՄ իրավունքի աղբյուր ամրագրել ԵՄ դատարանի որոշումները: Դա հնարավորություն կընձեռեք հնարավորինս խուսափելու բացերից և ամրապնդել ԵՄ իրավունքի հիմքերը:

Ընդհանրացնելով կատարված ուսումնասիրությունը՝ առանձնացնենք դատական ակտի հիմնական հատկանիշները: Դրանք են՝

- դատական ակտն ընդունող առանձնահատուկ սուբյեկտը՝ անկախ դատարանը,
- պետական կամ արտահայտման բնույթը,
- փաստաթղթային ձևը,
- նյութաիրավական և դատավարական նորմերի միջև փոխկապակցվածությունը,
- իրավաբանական փաստերի և կենսական նշանակության այլ փաստերի, ինչպես նաև՝ որպես հետևանքային ազդեցություն, վիճահարույց հարաբերությունների միջև փոխկապակցվածությունը,
- միանշանակությունը,
- պարտադիրությունը,
- կատարողականությունը (կատարելիությունը):

Վերջնական եզրակացություննայն է, որ դատական ակտերն ունեն յուրօրինակ իրավական բնույթ: Դրանց առանձնահատկությունը դրսևորվում է երկակիության մեջ. որում մեկտեղվում են մասնավոր իրավունքի և հանրային պաշտպանության տարրերը:

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՈՍ 2018 7 - 8 (229-230)



¹ Տե՛ս օրինակ՝ Тузов Н.А., Множественная природа судебных актов // Российский судья, № 7, 2007, էջեր 3-4:

² Տե՛ս Загайнова С.К., Судебные акты в механизме реализации судебной власти в гражданском и арбитражном процессе, М., 2007, էջ 87:

³ Տե՛ս Вукот М.А., Гражданский процесс России, М., 2004, էջ 284:

⁴ Տե՛ս Алексеев С.С., Общая теория права: В 2 т. М., 1982. Т. 2, էջ 194:

⁵ Տե՛ս Рожкова М.А., Судебный акт и динамика обязательства, М., 2003, էջ 12:

⁶ Տե՛ս Лупинская П.А., Решения в уголовном судопроизводстве. Их виды, содержание и формы, М., 1976, էջ 18:

⁷ Տե՛ս Загайнова С.К., նշվ. աշխ., էջեր 132-134:

⁸ Տե՛ս Теория государства и права: Учебник для юридических вузов и факультетов / Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова, М., 1998, էջ 386:

⁹ Տե՛ս Решенкин А.Г., Павлов Н.В., О языке судопроизводства и стиле судебного акта // Вестник ВАС РФ, 2001, № 7, էջ 115:

¹⁰ Տե՛ս Ярков В.В., Юридические факты в механизме реализации норм гражданского процессуального права.- Екатеринбург, 1992., Гурвич М.А., Виды исков по советскому гражданскому процессуальному праву// Известия Академии наук СССР. Отделение экономики и права, 1945, էջեր 1-12, Красавчиков О.А., Теория юридических фактов в советском гражданском праве: Автореферат дис.докт.юрид.наук, Свердловск, 1950, էջեր 12-13:

¹¹ Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն./ Ռ. Գ. Պետրոսյան; (իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Լ. Ջ. Թադևոսյանի խմբագրությամբ): - Չորրորդ հրատարակություն: - Եր.: «Ոսկան Երևանցի» հրատ., 2012, էջ393:

¹² Տե՛ս Մեղրյան Ս. Գ., Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Երևանի պետ. համալսարան, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 17:

¹³ Տե՛ս Դավթյան Ա. Հ., Քաղաքացիական դատավարություն, - Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2007, էջ 154:

¹⁴ Տե՛ս Загайнова С.К., նշվ. աշխ., էջ 139:

¹⁵ Տե՛ս Лившиц Р. З., Судебная практика как источник права, М., 2000, էջ 12:

¹⁶ Տե՛ս Савельева Т. А., Законная сила актов правосудия по гражданским делам / Т.А. Савельева // Вестник СГАП, 1999, №1, էջ 34:

¹⁷ Տե՛ս Гражданский процесс [Текст]: учеб. пособие / И.В. Решетникова, В.В. Ярков, М., изд-во Норма, 2000, էջ 52:

¹⁸ Տե՛ս Ткачев Н. И., Законность и обоснованность судебных постановлений по гражданским делам [Текст]: науч. изд. / Н. И. Ткачев, Саратов, СГУ, 1987, 54 с.

¹⁹ Տե՛ս Гражданский процесс [Текст]: учеб. пособие / В.А. Мусина, Н.А. Чечиной., Д. М. Чечета, М., Про-спект, 1999, էջ 44:

²⁰ Տե՛ս Зайцев И. М., Судебное решение как процессуальный документ / И. М. Зайцев // Российская юстиция, 1995, № 4, էջ 20:

²¹ Տե՛ս Статут Международного Суда // Действующее международное право, Документы в 2-х т. - Т. 1, составители Ю. М. Колосов, Э. С. Кривчикова, Учебное пособие, -М., Международные отношения, 2002, էջեր 35-36:

²² Մարդու իրավունքների և հիմնարար պատուիրյունների պաշտպանության մասին կոնվենցիայի 46-րդ հոդվածում նախատեսված է Կոնվենցիան ստորագրած անձանց կողմից Դատարանի դատական ակտերի կատարման պարտականություն: Այս պարտականությունը դրվում է պետական իշխանության բոլոր մարմինների, սեղական ինքնակառավարման մարմինների վրա: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը ձևավորում է իրավական դիրքորոշումներ, որոնք պարտադիր են Կոնվենցիայի կողմերի համար: Վերոշարադրյալը փաստում է, որ ՄԵԵԴ-ի իրավաստեղծ գործառույթը իրացվում է դատական նախադեպի ձևով: Տե՛ս Действующее международное право, Документы в 2-х т. - Т. 1, Составители: Ю.М. Колосов, Э.С. Кривчикова, Учебное пособие, -М., Междунар. отношения, 2002, էջեր 267-291:

²³ Տե՛ս Ниццкий договор изменяющий договор о Европейском союзе, договоры, учреждающие Европейские Сообщества и некоторые относящиеся к ним акты 2001 г. // Official Journal, էջ 80, № 10, March 2001.

²⁴ Տե՛ս Договор об учреждении Европейского Экономического Сообщества 1951 г. // Договоры, учреждающие Европейские Сообщества, -М., Право, 1994, էջեր 95-288:

- ²⁵ Տե՛ս Էնտին Լ.Մ., Суд Европейских сообществ. Избранные решения [Текст]: науч. изд. / И.Г. Аюпова, С.В. Водолагин, Г.П. Толстопятенко, Л.М. Энтин, -М., Норма, 2001, էջեր 1-10:
- ²⁶ Տե՛ս Էնտին Լ.Մ., նշվ. աշխ., էջեր 11-23:
- ²⁷ Տե՛ս Կաշկին Ս.Յ., Право Европейского Союза: документы и комментарии [Текст]:

учеб. пособие / под. ред. С. Ю. Кашкина, -М., ТЕРРА, 1999, էջեր 130-131:

²⁸ Տե՛ս Կաշկին Ս. Յ., Նշվ. աշխ., էջեր 130-131:

²⁹ Տե՛ս Тихоновецкий Д.С., Судебная практика как источник европейского права [Текст]: автореф. дис. ... канд. юрид. наук: 12.00.10 / Тихоновецкий Дмитрий Сергеевич, -М., 2004, էջ 11:



RESUME - РЕЗЮМЕ

LEGAL DESCRIPTION OF JUDICIAL ACTS

Gevorg Narinyan
*Judge of General Jurisdiction Court of First Instance
of the RA Aragatsotn Marz,
PhD Student of Yerevan Northern University*

The article presents a legal description of judicial acts. Based on the generalization of the information presented in the professional literature, in textbooks published by foreign and Armenian authors, and the author's practical experience, the following characteristics of legal acts were presented: the specific subject who applies the judicial act - an independent court, the expression of state will, documentary form, the relationship between material and legal norms, the relationship with legal facts and other vital facts, as well as the consistent effect between the disputed relationships, unambiguousness, compulsion, productivity.

Key words: legal description of judicial acts.

ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА СУДЕБНЫХ АКТОВ

Геворг Наринян
*Судья суда общей юрисдикции первой инстанции
Арагацотнского марза РА,
Соискатель Ереванского Северного университета*

В статье рассматривается правовая характеристика судебных актов. На основе обобщения представленной в профессиональной литературе информации, в учебниках, опубликованных зарубежными и армянскими авторами, и практического опыта автора статьи в данной научной работе изучаются следующие характеристики правовых актов: конкретный субъект, применяющий судебный акт, – независимый суд, выражение государственной воли, документальная форма, взаимосвязь материальных и правовых норм, юридических и других жизненно важных фактов, а также последовательный эффект спорных отношений, их однозначность, обязательность, производительность.

Ключевые слова: правовая характеристика судебных актов.

Բանալի բառեր - դատական ակտերի իրավական բնութագիրը: